**Թրանսփարենսի Ինթերնեշնլի 2024 թ. Կոռուպցիայի ընկալման համաթիվը**

**Հաճախակի տրվող հարցեր**

**Ի՞նչ է Կոռուպցիայի ընկալման համաթիվը (ԿԸՀ):**
Թրանսփարենսի Ինթերնեշնլի (ԹԻ) Կոռուպցիայի ընկալման համաթիվը (ԿԸՀ) գնահատում և դասակարգում է պետությունները/տարածքները՝ ըստ փորձագետների և գործարար ոլորտի ղեկավարների կողմից հանրային ոլորտի (պետական և համայնքային մարմիններ) կոռումպացվածության ընկալման: Այն բաղադրյալ համաթիվ է, որը հանդիսանում է կոռուպցիայի վերաբերյալ մի շարք հեղինակավոր կազմակերպությունների կողմից անցկացված առնվազն 3 և մինչև 13 հարցումների և գնահատումների տվյալների համադրությունը: ԿԸՀ-ն կոռուպցիայի վերաբերյալ աշխարհում ամենից լայնորեն գործածվող ցուցիչն է:

**Որո՞նք են ԿԸՀ հաշվարկման համար օգտագործվող տվյալների աղբյուրները:**
ԿԸՀ-ն հիմնված է կառավարման և բիզնես միջավայրի վերլուծության ոլորտներում մասնագիտացած 12 անկախ կազմակերպությունների 13 տվյալների (աղբյուրների) վրա: ԿԸՀ-ի համար օգտագործված տեղեկատվության աղբյուրները հիմնված են նրա հրապարակմանը նախորդող 2 տարիների ընթացքում հրապարակված տվյալների վրա: ԿԸՀ-ն ներառում է միայն այն աղբյուրները, որոնք տալիս են մի շարք երկրների/տարածքների համաթվեր և չափում են փորձագետների՝ հանրային ոլորտում առկա կոռուպցիայի ընկալումը: Տվյալների աղբյուրների լրիվ ցանկի, հարցվածների տեսակների և տրված կոնկրետ հարցերի վերաբերյալ տե՛ս **ԿԸՀ աղբյուրների նկարագրության փաստաթուղթը**:

**Ինչի՞ համար է պետք ԿԸՀ-ն, եթե կան 13 տարբեր աղբյուրներ, որոնք չափում են կոռուպցիայի դրսևորումները հանրային ոլորտում:**
Շնորհիվ հետևյալ չորս հատկանիշների՝ ԿԸՀ-ն դառնում է կառավարման արժեքավոր ցուցիչ՝

1. ԿԸՀ-ն աշխարհագրական առումով ունի համաշխարհային ընդգրկում՝ հնարավորություն տալով կատարել համեմատություններ, որոնք հնարավոր չէին լինի առանձին դիտարկված աղբյուրների պարագայում:
2. ԿԸՀ-ն ավելի հուսալի աղբյուր է, քան առանձին վերցրած աղբյուրի տվյալները, քանի որ այն, վերցնելով առնվազն 3, և, հնարավորության դեպքում, բոլոր 13 աղբյուրների արժեքների միջինը, չեզոքացնում է որևէ մեկ կամ մի քանի աղբյուրներում առկա հնարավոր սխալների ազդեցությունը:
3. ԿԸՀ-ն իր 0-ից 100 սանդղակով ավելի մանրամասն է իրարից տարանջատում տարբեր երկրների կոռուպցիայի ընկալման մակարդակները, քան ամեն մի առանձին վերցրած աղբյուր, որը կիրառում է, օրինակ, 1-ից 7, կամ 1-ից 10 սանդղակներ, որոնց վրա յուրաքանչյուր երկրի համաթիվը ամբողջ թիվ է:
4. Քանի որ ԿԸՀ-ն հաշվարկելու համար օգտագործվող տարբեր աղբյուրները գնահատում են հանրային ոլորտում կոռուպցիայի տարբեր չափողականություններ և

դրսևորումներ, ԿԸՀ-ն մեկ ցուցիչով կարողանում է համադրել կոռուպցիայի տարբեր ասպեկտները:

**Ինչո՞ւ է ԿԸՀ-ն հիմնվում ընկալման վրա:**
Ընդհանուր առմամբ, կոռուպցիան իր մեջ ներառում է անօրինական գործունեության տեսակներ, որոնք միտումնավոր կերպով թաքցվում են և բացահայտվում են միայն սկանդալների, հետաքննությունների կամ քրեական հետապնդումների միջոցով: Չնայած ակադեմիական ոլորտի հետազոտողները, քաղաքացիական հասարակությունը և կառավարությունները գրանցել են առաջընթաց կոռուպցիայի առանձին դրսևորումներ ոչ թե ընկալման տվյալների, այլ այլ միջոցներով չափելու առումով՝ այսօրվա դրությամբ չկա որևէ ցուցիչ, որն ուղղակիորեն և սպառիչ կերպով կարող է չափել տարբեր պետություններում կամ տարածքներում առկա կոռուպցիայի օբյեկտիվ մակարդակը:

ԿԸՀ-ն հաշվարկելու համար օգտագործված աղբյուրներում և հարցումներում հարցվածներին տրվում են հարցեր, որոնք ներառված են ճշգրիտ կերպով մշակված և փորձարկված հարցաշարերում: (Բոլոր աղբյուրների ցանկի և այդ աղբյուրներում ներառված հարցերի համար տե՛ս ) ԿԸՀ-ն իր մեջ ներառում է համապատասխան շահագրգիռ կողմերի տեղեկացված կարծիքները, որոնք զգալի չափով կոռելացված են այնպիսի օբյեկտիվ ցուցիչների հետ, ինչպիսին է, օրինակ, շարքային քաղաքացիների կաշառատվության փորձը, որն արտացոլված է Կոռուպցիայի համաշխարհային բարոմետրում:

**Ո՞ր պետությունները/տարածքներն են ընդգրկված Կոռուպցիայի ընկալման համաթվի (ԿԸՀ) դասակարգման աղյուսակում և ինչո՞ւ:**
Որպեսզի պետությունը/տարածքը ընդգրկվի դասակարգման աղյուսակում, այն պետք է ներառված լինի ԿԸՀ տվյալների առնվազն երեք աղբյուրներում: Համաթվի աղյուսակում տվյալ պետության ներառված չլինելը նշանակում է միայն այն, որ նրա վերաբերյալ առկա չէ կոռուպցիային առնչվող բավարար տեղեկատվություն, այլ ոչ թե այն, որ այդ երկրում կոռուպցիա գոյություն չունի: Սկսած 2012 թվականից՝ ԿԸՀ դասակարգման աղյուսակում ներառվել են աշխարհի մոտ 180 երկրներ:

**Արդյո՞ք տարբեր երկրների ԿԸՀ միավորները համեմատելի են իրար հետ, նույնիսկ եթե դրանք հաշվարկված են տարբեր աղբյուրների օգտագործմամբ:**
Այո: ԿԸՀ-ն հաշվարկելու համար օգտագործվող բոլոր 13 աղբյուրների միջև առկա է կոռելյացիայի բարձր աստիճան: Դա նշանակում է, որ չնայած դրանք չափում են իրարից մի փոքր տարբերվող դրսևորումներ, այնուամենայնիվ բոլորն էլ առնչվում են իրենց էությամբ միևնույն երևույթի հետ: Բացի այդ, համաձայն ԵՄ Եվրոպական հանձնաժողովի Համատեղ հետազոտությունների կենտրոնի կողմից անցկացված վիճակագրական գրախոսության՝ ոչ աղբյուրների թիվը, ոչ էլ այդ աղբյուրների կոնկրետ վերցրած համադրությունը նշանակալիորեն չեն ազդում ԿԸՀ արժեքի վրա:

**Ո՞րն է ԿԸՀ դասակարգման մեջ երկրի/տարածքի զբաղեցրած տեղի և նրա ԿԸՀ արժեքի միջև տարբերությունը:**
Երկրի/տարածքի ԿԸՀ արժեքը ցույց է տալիս նրա հանրային ոլորտում կոռուպցիայի ընկալվող մակարդակը 0-ից 100 սանդղակով, որտեղ 0-ն նշանակում է, որ այդ երկրի հանրային ոլորտն ընկալվում է որպես բացարձակապես կոռումպացված, իսկ 100-ը նշանակում է, որ այդ ոլորտն ընկալվում է որպես բացարձակապես մաքուր: Երկրի

զբաղեցրած տեղը ԿԸՀ դասակարգման աղյուսակում ցույց է տալիս նրա դիրքը դասակարգման մեջ ներառված երկրների/տարածքների շարքում: Երկրի զբաղեցրած տեղը ԿԸՀ դասակարգման աղյուսակում կարող է նաև պարզապես փոփոխվել այդ աղյուսակում ներառված երկրների թվի փոփոխությամբ կամ եթե այլ երկրների համաթվերը աճել կամ նվազել են:

**Կոռուպցիայի հետ կապված ո՞ր ասպեկտներն են արտացոլված ԿԸՀ-ում:**
Կախված տվյալների հավաքագրման համար օգտագործվող կոնկրետ հարցի ձևակերպումից՝ ԿԸՀ աղբյուրների տվյալներն արտացոլում են կոռուպցիայի և դրան հակազդման հետևյալ ասպեկտները՝

- կաշառակերություն,
- հանրային միջոցների մսխում,
- առանց (բացասական) հետևանքների առերեսվելու՝ պետական պաշտոնն անձնական շահի համար օգտագործող պաշտոնյաների մեծ թիվ,
- իշխանությունների ունակություն/անկարողություն՝ ներդնելու հանրային ոլորտում կոռուպցիան սահմանափակելու և բարեվարքության արդյունավետ մեխանիզմներ,
- բյուրոկրատական արգելքներ և քաշքշուկ, որոնք կարող են մեծացնել կոռուպցիոն հնարավորությունները,
- հանրային ծառայությունում պաշտոնի նշանակում՝ հիմնված մերիտոկրատական (ըստ արժանիքների)՝ ի հակադրություն «խնամի-ծանոթ-բարեկամ» սկզբունքի վրա,
- կոռումպացված պաշտոնյաների արդյունավետ քրեական հետապնդում,
- պետական պաշտոնյաների գույքի և եկամուտի հայտարարագրումը և շահերի բախումը կանխարգելող համարժեք օրենքների առկայություն,
- կաշառակերության և կոռուպցիայի դեպքերի մասին հաղորդող ազդարարների, լրագրողների և քննիչների իրավական պաշտպանություն,
- պետության զավթում՝ ի օգուտ նեղ անձնական շահերի,
- քաղաքացիական հասարակության համար պետական մարմինների գործունեության հետ կապված տեղեկատվության մատչելիություն:

ԿԸՀ աղբյուրների կողմից տրված հարցերի ամբողջական ցանկի համար տե՛ս **Աղբյուրների նկարագրության փաստաթուղթը** ():

**Կոռուպցիայի ո՞ր դրսևորումները չի արտացոլում ԿԸՀ-ն:**
ԿԸՀ աղբյուրների տվյալները չեն արտացոլում կոռուպցիայի հետևյալ դրսևորումները՝

- շարքային քաղաքացիների կողմից կոռուպցիայի ընկալում կամ փորձ,
- հարկային խարդախություններ,
- ապօրինի ֆինանսական հոսքեր,
- կոռուպցիան խթանող անձինք (փաստաբաններ, հաշվապահներ, ֆինանսական խորհրդականներ և այլն),
- փողերի լվացում,
- մասնավոր հատվածում կոռուպցիա,
- ստվերային տնտեսություն և շուկաներ:

**Ինչո՞ւ ժողովրդավարության վատթարացող մակարդակ և կրճատվող քաղաքացիական տարածք ունեցող որոշ ավտորիտար վարչակարգեր և պետություններ ունեն ԿԸՀ բարձր միավորներ:**

Գոյություն ունեն բավականին համոզիչ ապացույցներ, որոնք կոռուպցիայի ուժեղ և կայուն կառավարելիությունը կապում են ուժեղ ժողովրդավարական ինստիտուտների, ազատ մամուլի և բաց քաղաքացիական տարածքի հետ, սակայն ավտորիտար պետությունները նույնպես կարող են ունակ լինել կառավարելի դարձնելու կոռուպցիայի որոշակի դրսևորումներ՝ կիրառելով վերևից-ներքև մոտեցումներ:

Որոշ ավտորիտար երկրներում հակակոռուպցիոն ռազմավարությունների հաջողությունը հակված է լինել այդպիսի երկրներում ուժեղ առաջնորդի առկայության արդյունք, որը օգտագործում է իր անձնական հեղինակությունը՝ խաթարելու կոռուպցիոն ցանցերը և վերևից պարտադրելու կոռուպցիայի նկատմամբ վերահսկելիություն: Այս վերևից-ներքև մոտեցումները հաճախ իրենց մեջ ներառում են իշխանության կենտրոնացում, տնտեսության ոլորտում ապակարգավորում և արդիականացման (մոդերնիզացիայի) նախաձեռնություններ, ինչպես, օրինակ, հանրային ծառայությունների թվայնացում, որոնք զուգորդված են խիստ պատժամիջոցներով և ցուցադրական պատիժներով, ինչպիսիք են՝ զանգվածային հեռացումները կամ ձերբակալությունները և նույնիսկ արտադատական միջոցները կամ բռնությունը: Ավտորիտար պետություններում կոռուպցիայի վերահսկումն այսպիսով կարող է լինել ավելի մակերեսային և ավելի անկայուն, քան ավելի ժողովրդավարական համակարգերում կամ տեղի ունենալ քաղաքացիական ազատությունների սահմանափակման հաշվին: Դա պայմանավորված է նրանով, որ այնտեղ, որտեղ բացակայում են թափանցիկ և հաշվետու հանրային հաստատությունների տեսքով համակարգային զսպումները և հակակշիռները, կոռուպցիայի վերահսկելիությունը մեծապես կախված է գործող ղեկավարների քաղաքական կամքից:

Մինչ որոշ ավտորիտար պետություններ կարող են ընկալվել համեմատաբար հաջողակ պետական կառավարման համակարգում կոռուպցիայի վերահսկելիության առումով, ընդհանուր առմամբ, այս երկրներում կառավարման որակը կարող է մնալ ցածր:

**Արդյո՞ք ԿԸՀ ամենացածր արժեք ունեցող պետությունը/տարածքը աշխարհի ամենակոռումպացված պետությունն է:**

Ոչ: ԿԸՀ-ն հանրային հատվածի կոռուպցիայի՝ այսինքն վարչական և քաղաքական կոռուպցիայի ընկալման ցուցանիշն է: Այն մի ամբողջ պետության կամ հասարակության կոռումպացվածության, կամ այդ պետության հանրային քաղաքականությունների, կամ նրա մասնավոր հատվածի գործունեության վերաբերյալ դատավճիռ չէ: ԿԸՀ դասակարգման ստորին հորիզոնականներում գտնվող պետությունների քաղաքացիները հաճախ նույնքան մտահոգ են և ունեն նույնքան քննադատական մոտեցում կոռուպցիայի նկատմամբ, որքան վերին հորիզոնականներում գտնվող պետությունների/տարածքների հասարակությունները: Բացի այդ, ԿԸՀ ամենացածր արժեք ունեցող պետությունը/տարածքը այն է, որում հանրային ոլորտում կոռուպցիայի մակարդակն ընկալվում է ամենաբարձրը *ԿԸՀ աղյուսակում ընդգրկված պետությունների/տարածքների շարքում*: ԿԸՀ-ն ոչ մի տեղեկություն չի տալիս այն պետությունների/տարածքների վերաբերյալ, որոնք ընդգրկված չեն այդ համաթվի աղյուսակում:

**Կարելի՞ է արդյոք տվյալ երկրի տվյալ տարվա ԿԸՀ միավորը համեմատել նրա նախորդ տարվա միավորի հետ:**

Այո: 2012 թ. ԿԸՀ-ն հաշվարկելու մեթոդաբանության վերանայման հետևանքով փոխվեց նաև ԿԸՀ միավորների սանդղակը, և այն այժմ 0-ից 100 է: Յուրաքանչյուր երկրի համաթվի միավորը, որը հաշվարկված է՝ հիմնվելով տվյալների համապատասխան աղբյուրների վրա, համապատասխանեցվում է ԿԸՀ սանդղակի հետ՝ վերցնելով 2012 թ. ԿԸՀ գլոբալ միջինը և ստանդարտ շեղումը՝ որպես հաշվանքի մեկնարկային տարի: Կիրառելով այս նոր սանդղակը՝ հնարավոր է դառնում համեմատել ԿԸՀ տվյալ տարվա արժեքները նրա նախորդ և հաջորդ տարիների արժեքների հետ՝ սկսած 2012 թվականից: Պայմանավորված ԿԸՀ հաշվարկման մեթոդաբանության նշված փոփոխությամբ՝ ԿԸՀ 2012 թվականին նախորդող տարիների միավորները չի կարելի համեմատել 2012 և նրան հաջորդող թվականների միավորների հետ:

Մեթոդաբանության մեջ 2012 թ. կատարված փոփոխության ավելի մանրամասն նկարագրության համար տե՛ս **Կոռուպցիայի ընկալման համաթիվ՝ 2012 թ. վերանայված մեթոդաբանություն:**

**Որտե՞ղ է հնարավոր գտնել տվյալների ամբողջական աղյուսակները ժամանակային շարքերի տեսքով:**
Դուք այն կարող եք գտնել մեր կայքում – տե՛ս ...:

**Ցանկանում եմ ներկայացնել ԿԸՀ տվյալներն իմ հրապարակումներում: Պե՞տք է արդյոք դրա համար թույլտվություն խնդրել:**
Ոչ: Եթե այլ բան չի նշվում, ապա Թրանսպարենսի Ինթերնեշնլի բովանդակությունը կարգավորվում է *Creative Commons Attribution-No Derivs 4.0* լիցենզիայով: Դա նշանակում է, որ դուք ազատ եք օգտագործելու մեր տվյալներն առանց մեզ հետ համաձայնեցնելու, եթե դուք համաձայն եք նշված լիցենզիայի պայմանների հետ:

**Կարելի՞ է արդյոք համեմատություններ անել մինչև 2012 թ. ԿԸՀ արդյունքների հետ:**
Ոչ, քանի որ 2012 թ. մեթոդաբանությունը փոփոխության ենթարկվեց, և այդ տարվանից առաջ եղած արդյունքները չեն կարող համեմատվել հետագա տարիների արդյունքների հետ: Միայն 2012 թ. հետո ստացված արդյունքներն են իրար հետ համեմատելի:

**Կարելի՞ է արդյոք համեմատել իրար հետ երկրներ, որոնք ԿԸՀ արժեքները հաշվարկվել են՝ օգտագործելով տարբեր աղբյուրներ:**
Այո: Բոլոր աղբյուրները, որոնց միջոցով հաշվարկվում է ԿԸՀ-ն, չափում են միևնույն կոնցեպտը (հանրային ոլորտի կոռուպցիայի ընկալումը) նրա տարբեր և որոշակի չափողականությունների, օրինակ, հանրային պաշտոնյաների կաշառակերության կամ նրանց արդյունավետ կերպով քրեական հետապնդման ենթարկելու միջոցով: Կիրառելով վերամասշտաբավորման գործողությունը՝ մեր բոլոր աղբյուրների տվյալների արժեքներն ավելի մոտ են բերվում գլոբալ միջինին և ստանդարտ շեղմանը, որոնց հաշվարկի ելակետը 2012 թվականն է՝ հնարավորություն տալով իրականացնել ժամանակային համեմատություններ: Վերամասշտաբավորման մեր գործողության վերաբերյալ ավելի ամբողջական բացատրության համար տե՛ս **մեր մեթոդաբանության տեխնիկական նշումները ....**

**Իմ երկրի ԿԸՀ արժեքը փոխվել է մեկ-երկու կետով: Արդյո՞ք դա նշանակում է, որ կոռուպցիան ավելացել կամ նվազել է:**

ԿԸՀ-ն բաղադրյալ ցուցիչ է, որը հաշվարկելու համար անհրաժեշտ է առնվազն երեք աղբյուր յուրաքանչյուր երկրի համար: Որոշ երկրների համար աղբյուրները տալիս են իրար մոտ արժեքներ, իսկ որոշ այլ երկրների դեպքում տարբեր աղբյուրների արժեքներն ավելի շատ են իրարից տարբերվում: Այս տարբերությունները ներկայացնելու համար ԿԸՀ արժեքի հետ մեկտեղ ներկայացվում են նաև ստանդարտ շեղումը և վստահելիության միջակայքերի վերին և ներքին սահմանները: Այն երկրների ԿԸՀ արժեքները, որոնց հաշվարկի համար օգտագործված աղբյուրների արժեքներն իրար մոտ են, կունենան ավելի փոքր ստանդարտ շեղում, քան այն երկրների ԿԸՀ արժեքները, որոնց հաշվարկի համար օգտագործված աղբյուրների արժեքներն իրարից շատ են տարբերվում: Քիչ հավանական է, որ ԿԸՀ արժեքի փոփոխությունը մեկ կամ երկու միավորով լինի վիճակագրորեն նշանակալի: Վիճակագրորեն նշանակալի փոփոխությունները բերված են մեր տվյալների Excel ֆորմատով աղյուսակներում. տե՛ս «**Վիճակագրորեն նշանակալի փոփոխություններ**» վերնագրով աղյուսակը:

**Արտացոլո՞ւմ է արդյոք ԿԸՀ-ն տվյալ երկրում տիրող կոռուպցիայի ամբողջական պատկերը:**
Ոչ: ԿԸՀ-ն սահմանափակված է որոշակի շրջանակով՝ վեր հանելով կոռուպցիան հանրային հատվածում գործարարների և երկրի փորձագետների տեսանկյունից: Այս մոտեցումը լրացնելու և կոռուպցիայի տարբեր ասպեկտներ ներկայացնելու համար Թրանսփարենսի Ինթերնեշնլի Քարտուղարությունը և աշխարհի ավելի քան 100 երկրներում գտնվող նրա ազգային ներկայացուցչությունների ցանցը իրականացնում են կոռուպցիայի վերաբերյալ որակական և քանակական հետազոտություններ և ուսումնասիրություններ, որոնք տալիս են կոռուպցիայի չափի, տարածվածության և դինամիկայի համապարփակ պատկերը ողջ աշխարհում:

**Եղե՞լ են արդյոք ԿԸՀ մեթոդաբանության արժանահավատության անկախ ստուգումներ:**
ԵՄ Եվրոպական հանձնաժողովի Համատեղ հետազոտությունների կենտրոնն անց է կացրել ԿԸՀ 2017 թ. և դրա մեթոդաբանության անկախ աուդիտ: Նույն աուդիտն անց է կացվել 2012 թ. ԿԸՀ հաշվարկելու նոր մեթոդաբանության ներդրումից հետո: Երկու աուդիտի արդյունքում պարզվել է, որ ԿԸՀ-ն կոցեպտուալ և վիճակագրական տեսանկյունից տրամաբանական և ամբողջական է և ունի հավասարակշռված կառուցվածք: Ամբողջական զեկույցը և առաջարկությունները տե՛ս ԹԻ կայքում ...:

**Ինչպե՞ս են հաշվարկվում վիճակագրորեն նշանակալի փոփոխությունները:**
2018 թվականից ի վեր Եվրոպական հանձնաժողովի Համատեղ հետազոտությունների կենտրոնի տված խորհուրդների հիման վրա Թրանսփարենսի Ինթերնեշնլը կիրառում է ԿԸՀ ստանդարտ սխալը և ազդեցության մեծությունները հաշվարկելու վերանայված մոտեցում: Վիճակագրորեն նշանակալի փոփոխությունները հաշվարկվում են՝ օգտագործելով ազդեցության մեծությունը, ստանդարտ շեղումը և յուրաքանչյուր երկրի համար օգտագործվող աղբյուրների քանակը: Պարզելու համար արդյոք ԿԸՀ արժեքներում փոփոխությունները վիճակագրորեն նշանակալի են, թե ոչ, կիրառվում է 90% վստահելիության միջակայքը:
Տարբերությունները կարող են հաշվարկվել՝ համեմատելով ցանկացած երկու երկիր իրար հետ կամ միևնույն երկրի ցանկացած երկու տարիների ԿԸՀ արժեքները: Ընդունված է դիտարկել ավելի նշանակալից փոփոխությունները, որոնք դիտվում են ժամանակի ընթացքում, այդ իսկ պատճառով 2012 թվականից ի վեր համեմատությունները կարող են

լինել օգտակար: Ամբողջական բացատրությունը, ներառյալ բանաձևերը, կարելի է գտնել ԹԻ կայքի ծանոթություն տեխնիկական մեթոդաբանության վերաբերյալ էջում: